

Մի քիչ լետոյ գերեզմանը լցնում են հողով, և սրտի կտորն առած գաղտագողի վերադառնում, բերում սիրտը ձգում ջրի մէջ, խառնում և տալիս հիւանդներին խմելու: Թաքուն-այան, որ ինքը ինձ պատմեց այս հաւատացնում էր, թէ անմիջապէս բոլոր հիւանդներն առողջացան, և աւելացրեց, թէ սրտի այդ կտորը չորացրել պահել են, այժմ երբ վախից հիւանդանում են, մի քիչ փոշիացնում, լցնում են ջրի մէջ, տալիս խմելու, և իբր անմիջապէս լաւանում են:

Մի այսպիսի դէպքի մասին պատմեցին ինձ նաև Փիփ գիւղում, ուր Թաքուն-այանի դերը կատարել էր Տէր Միքայէլը: Միայն սա ամբողջ սիրտը հանել, գերեզմանը ծածկել, վերան կրակ արել, սիրտը, բացի մի փոքրիկ կտորից, վառել և մոխիրը փչել, քամուն էր տուել: Յետոյ սրտից աւելացած մասը թաղել էին օջախի մի անկիւնում, իբր մի նուիրական բան:

Գետաշէնում Նուասարդանց Անայի միակ միամիայ որդին մեռնում է: Մայրը հիւանդանում է և շարունակ կրկնում, թէ երեխան գիշերները գալիս է և ուզում է իրեն տանել: Գնում են բաց անում գերեզմանը, ճղում սիրտը և վառում երեխային: Բայց մայրը դարձեալ չի հանգստանում, և այժմս էլ ասում է թէ մանկան ճկոյթ մատն է իրեն երևում և ասում. «Եկել եմ քեզ տանեմ»: Կրկին գնում են, բաց անում գերեզմանը, մաղում երեխայի աճիւնը և միջից զտնում ճկոյթը, վառում, և նորից ծածկում: Եւ միայն այժմ մայրը հանգստանում է և լաւանում:

Բանանցեցի Հարիւրամեայ Մուսունց Մնացականը ասում է, թէ մօտ երեսուն տարի առաջ այդպիսի մեռելին հանում էին գերեզմանից, միքանի անգամ հրացան արձակում վերան, քաջ տալիս այս ու այն կողմ և նորից թաղում:

### Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Կ Ա Ն Դ Ե Ղ Ե Բ .

Իլ-եաբասի. — Այս միւսնոյն հիւանդութիւնը պատահում է հայէպում, Բաղդադում, Թէյրանում, Սպահանում և յայտնի է Bouton d'Alep, հայէպ-չորան, չիլ-չորան անուններով: Սա վարակիչ չէ, և

միևնույն անձին երկրորդ անգամ չի կարող պատահիլ: Երևում է մեծ մասամբ 2—12 տարեկանների և առաւելապէս իգական սեռի, այն էլ երեսի վրայ և առհասարակ բաց տեղերում ձեռներին, ականջին, ոտներին (գիւղացիները մեծ մասամբ բոբիլ են լինում): Տեղացիները դրան երկու տեսակի են բաժանում՝ էջ և արու: Էջը աւելի արագ է տարածւում և աւելի արիւնոտ է լինում, իսկ արուն՝ աւելի դանդաղ կերպով է տարածւում և պակաս արիւնոտ է: Երկու տեսակն էլ փոքրիկ կարմրախառն կապտադոյն բշտիկներով են սկսւում, հետզհետէ տարածւում, չետոյ մեծ վէրք դառնում և թարախակալում: Մի տարուց չետոյ լուանում է, միայն սպին մնում է անհետ \*):

Այս վէրքը տեղական միջոցներով բժշկում են Ենդիբարեան գերդաստանը երեք-չորս սերնդից ի վեր: Ինձ շատ դժուարութեամբ չաջողուեց ճշտութեամբ իմանալ այս միջոցը, որ այդ գերդաստանը մի դարից աւելի իբր դադոնիք պահում է և միայն ինքը դորձադրում: Այս միջոցը հետեւեալն է.

Մի մսխալ սպիտակ և դեղին, մանրացրած մկնդեղ (Arsenic), 15 մսխալ ձէթ, 10 մսխալ այծի ճրագու և 5 մսխալ մեղրամոմ միասին խառնում են և եփում: Յետոյ հովացնում, քսում կտաւի վրայ և դնում վէրքին՝ նախապէս սապոնի քարաջրի \*\*) մէջ թափախած բամբակը կէս ժամ վէրքի վրայ պահելուց չետոյ:

Օրը մի անգամ այս դեղը փոխելով շարունակում են երեք կամ-չորս օր, երբ վէրքը ուռչում է և շուրջը սպիտակում: Այս ժամանակ տխտիւու խոտը սանդի մէջ ճեծում են, հիւթը քամում, մի քիչ աւելի աւելացնելով շաղում և ապա այս խմորը օրեկան երեք անգամ դնում վէրքի վրայ, լուրաքանչիւր անգամին նախապէս բարխառն ջրով լուանալուց չետոյ: Իսկ եթէ տխտիւու խոտը չեն կարողանում դանել, մածնով լուանում են:

Ջերմ.—Սառը աղբիւրներում լողանում են: Լողանալիս չանկարձ սառն ջուր են ածում վերաները:

Ախորժակը բանալու համար չորացրած հունը բրնձով շորուաց են անում և ուտեցնում:

Ականջացաւ. Մի եփու կաթ օդի են կաթեցնում ականջի մէջ

\*) Годовикъ или персидская болѣзнь въ Елисаветополѣ. Скорова. Въ Сбор. Кавк. Мед. Общ. 1868 г. № 16. Прот. Кав. Мед. Об. V. стр. 360. IV. стр. 198.

\*\*) Սապոնի քարաջուրը, որ գործ են ածում սապոն եփելիս, պատրաստում են այսպէս: մանրացնում են սապոնաքարը և խառնում կէս ֆունտ կրի հետ, լցնում քամիլի մէջ և ջուր ածում վերան: Քամիլից հոսած ջուրը կազմում է սապոնի քարաջուրը:

և խորոված սոխի միջուկը դնում ականջափողի մէջ, բամբակով ծածկում ականջը և միքանի րոպէ աչպէս պահում:

Ելունելուց չառաջացած վէրքը բուժելու համար ձեծած հում կարտոֆիլ են դնում վերան. ապա բրինձը աղում են, բովում և ձէթի մէջ թաթախուած շորի վերայ ցանելով դնում վէրքի վրայ:

Մեղրամոմը ձէթով եփում և դնում են վէրքի վրայ:

Ըչացաւ. Կնոջ կաթը բամբակի վերայ կաթեցնելով դնում են աչքերին, Զգուշանում են թթուեղէններէրից:

Օղիով լուանում են աչքերը, ցուրտ ջուր են սրսկում: Արիւն են առնում ցաւոյ աչքի ներքեւի կողմից կամ ձոճրակից:

Ատամնացաւ. Կինամոն, մխակ, պղպեղ միասին խառնում, ձեծում, քացախոտ բամբակի վրայ ցանում և դնում ցաւոյ ատամին:

Մի քիչ մխակ եփում են և ջրով բերանը ողողում:

Ծխում են և ձուկը բերանում պահում:

Արեքցողութիւն. Յետ կացուցանելու համար հարբած միջոցին նրա մէջը խառնում են գինու հետ և խմացնում, որից զգուելով դադարում են խմելուց:

Բորոտութիւնը. բուժելու համար փոքրշտանի կանանչի արմատները թակում, եփում և այս ջրով լողացնում են հիւանդին:

Պլխացաւ. Տաք ջրով լուանում են գլուխը և փաթաթելով աշխատում քրտնցնել:

Պլխի ոջիլը կտրելու համար ձիթապտղի իւղ են քսում գլխին և մի օրից լուանում:

Պլխի պատառուածքը բուժելու համար նախ լուանում են և վերան մեղր դնում. ապա կաթով եփում են սապոնը և մի շորի վրայ քաշած դնում պատառուածի վրայ:

Գորտնուկ. Լուսնի նորին (նոր լուսնին) ձեռքը թաց են անում, գորտնուկի վրայ աղ ցանում, պարզում դէպի լուսինն ասելով.

Լուսինը նոր,

Գորտնուկը չոր:

Եւ ապա սեւ էշի լիզել տալիս գորտնուկի վրայի աղը:

Թօյնի դիւ. Թան և մածուն են ուտում:

Լուծելու դիւ. Վառեկի մսով շորուպ են ուտում:

Մուգ թէչ խմում: Թթու շորուպ ուտում:

Ծծի ուռոյցք. Կովի կաթի մէջ եփում են ձեծած կթաւատ կամ գարու ալիւր և շորի վրայ քաշելով դնում ձծին. երբ ուռոյցքը մի տեղ է հաւաքւում, բաքմազով մի քիչ ալիւր են շաղախում, մի քիչ էլ մոխիր ցանում և շորի վրայ քաշած դնում ուռած տեղը, որպէս զի ծակի և շարաւը հոսէ:

Թաթիսորի վրայ մի քիչ քացախ են ածում և դնում ուռուցքի վրայ:

Կողագաւը բուժելու համար տաքացրած աղիւս են դնում կողքին: Կորեկ են բովում. լցնում մի պարկի մէջ և դնում կողքին: Կտուած սեղի արիւնհոսութիւնը դադարեցնելու համար մեղր են դնում վերան:

Հագ. Խնձորի մէջ մի քիչ խունդ են դնում, խորովում, ուտում: Թուզը կաթով եփում և ուտում են:

Ոսպով շորուայ, փիփերտ, ալիւրից պատրաստած կերակուր են ուտեցնում:

Աւելուկի սերմից պատրաստած թէյ են խմացնում:

Հարբուխ. Խնչում են մի շորի մէջ, փաթաթում և ձգում փողոց. ով վերցնի՝ նրան կանցնի հարբուխը:

Ձեռքի ճակնոց. Մեղրամոմ, ձէթ և մի քիչ աչճի ճարպ միասին եփում են և քսում ձեռներին:

Մագեղը երկարացնելու համար. Եւաշան աւելը եփում, այդ ջրով լուանում են գլխները. Մսի ճիլ են ուտում: Համբարձմանը ցօղ են հաւաքում և դրանով լուանում գլուխները:

Մագեղը քափուելու դեմ. Կանաչք ուրիշ դիւղ գնալիս, իրենց գետից մի քար են տանում իրենց հետ և առաջին անգամ լողանալիս այդ քարը ձգում ջրի մէջ, որաժէս զի մագեղը չթափուի:

Մասնաւուցչ. Մաճնի մէջ մի քիչ ալիւր են ածում, տաքացնում, դնում մատնշունչի վրայ:

Մեզը կապուելիս. Բուրդը տաք ջրում թուչում դնում են փորին, լակ սեռական անդամը՝ գոլ կաթիլ մէջ:

Մեղուի խայթածի վրայ մաճուն են քսում, որ լաւանայ:

Մկնաստ. Մի թէյի գդալ փոշիացած ծծումբ կերակրի մէջ խառնելով ուտում են երեք շաբաթ շարունակ:

Մոլոտր — (МОЛОТ). Մառը ջրով լողացնում են:

Մրսելուց. Առողջանալու համար ոտները տաք ջուրն են դնում, որ քրտնին:

Վերմալի տակ մի ամանով սառն ջուր են դնում և կիզացրած բարերը մէջը ձգում. բարձրացած գոլորշիները քրտնեցնում են հիւանդին:

Սառուց են ուտեցնում:

Ջան կծածը բուժելու համար. նախ կծող շան մազն են դնում վէրքի վերայ, ապա ծեծած լոբին իւղով եփում են և շորի վերայ քաշելով դնում վէրքին: Յաճախ լուանում են:

Տղամայր կնոջ կաթն աւելացնելու համար կարմրախաչտ ձուկնանիլի եփում են և օւռը խմացնում կնոջը:

Օշօշ ճաղիկը եփում են և ջուրը խմացնում տղամօրր:  
Յրօի արած. Տաքացրած աղ են կապում ոտներին և շաղախած  
հինալ դնում:

Փոխելու դեմ. Թթու դրուած տանձ և խնձոր են ուտում:  
Փորագաւ. Գինին տաքացնում են և մի քիչ պղպեղ ածում մէջը  
ու խմում:

Պորտը «քաշում» են — մասսաժ են անում:

Արի թեփը և կորեկը բովում են և պարկի մէջ ածած դնում  
փորին:

Կինամոնոլ և Ի—՛—՛ անուանուած բոյսով թէյ են պատրաստում  
և խմացնում

Սառ ջուր են ածում մէջքին:

Քաչալ. Նախ մազերը ածելում են. սև ձիւթը հալում են, քա-  
շում կտաւի կտորի վրայ, մի քիչ (2 մսխալ) սոււէջմանի (суглема)  
փոշիացնելով ածում վերան և տաք տաք կապում գլխին: Երկու օրից  
յետոյ այս եախուն վերցնում են, և նոր դուրս եկած մազերը մատ-  
ներով մէկ մէկ քաշում հանում են, յետոյ կրկին նոյն կերպ պատ-  
րաստուած եախուն ձգում, երկու օրից կրկին դուրս եկած մազերը  
պոկում, երրորդ անգամ նոյնպիսի եախու ձգում և երբ նկատում են,  
որ ամբողջ գլուխը կակուղ և խիտ մազերով ճածկուում է, սկսում են  
կարագ իւղով կամ ձուի դեղնուցով օրը մի անգամ երեք օր շարունակ  
լուանալ:

Քրից արիւն գալիս. Չարմալի սանրից քերում են և քացախի  
հետ խառնելով քաշում քիթը:

Եթէ կնոջ քթից է արիւն գալիս, հաստ թելով կապում են  
ձախ ծիծը, իսկ եթէ տղամարդ՝ ամորձի բը:

